- Ձեր նույնականացման տվյալները (օրինակ՝ ձեր անունը, ազգանունը, լեզուն և երկիրը, որից Դուք փոխգործակցում եք մեզ հետ, կոնտակտային տվյալներ և այլն),
- Տնտեսական տվյալներ և գործարքների վերաբերյալ տեղեկություններ (օրինակ՝ ձեր վճարման կամ քարտի տվյալները, տեղեկություններ ձեր գնումների, պատվերների, վերադարձված ապրանքների մասին և այլն),
- Միացման վայրի, աշխարհագրական տեղաբաշխման և (կամ) բրաուզերի մասին տվյալներ (եթե, օրինակ, մեզ հետ փոխգործակցում եք ձեր բջջային հեռախոսի միջոցով),
- առևտրային տեղեկատվություն (օրինակ, եթե դուք բաժանորդագրվել եք մեր նորություններին),
- տեղեկություն՝ ձեր ճաշակի եւ նախասիրությունների մասին:

Հիշեք, որ երբ մենք խնդրում ենք լրացնել Ձեր անձնական տվյալները, որպեսզի Ձեզ հնարավորություն տրամադրենք՝ օգտվելու հարթակի բոլոր ֆունկցիաներից և ծառայություններից, մենք որպես պարտադիր ենք նշում որոշակի դաշտեր, քանի որ դա այն տեղեկատվություն է, որը անհրաժեշտ է Ձեզ ծառայությունը կամ համապատասխան ֆունկցիոնալությունը տրամադրելու համար: Խնդրում ենք հաշվի առնել, որ եթե նախընտրեք չտրամադրել մեզ նշված տեղեկատվությունը, հնարավոր է, որ չկարողանաք ավարտել ձեր անձնական էջի գրանցումը կամ օգտվել հասանելի ծառայություններից և հնարավորություններից:

Որոշ դեպքերում, Ձեր մասին տեղեկատվությունը կարող է մեզ տրամադրել երրորդ անձի կողմից՝ օգտագործելով հարթակում հասանելի համապատասխան գործառույթը կամ ծառայությունը, օրինակ՝ ուղարկելով ձեզ նվեր քարտ կամ պատվիրելով Ձեր հասցեին: Այս դեպքերում մենք ձեր տվյալները մշակում ենք միայն այնքանով, որքանով դա պահանջում է տվյալ գործառույթը կամ ծառայությանը՝ ինչպես նշված է սույն Գաղտնիության քաղաքականության մեջ:

Կախված նրանից, թե ինչպես եք փոխգործակցում մեր հարթակի հետ, այսինքն՝ կախված այն ծառայություններից, ապրանքներից կամ գործառույթներից, որոնցից ցանկանում եք օգտվել, մենք կմշակենք Ձեր անձնական տվյալները հետևյալ նպատակների համար՝

ՆՊԱՏԱԿ	+ տեղեկություն
<p>1. Որպես Հարթակի օգտատեր ձեր գրանցումը կառավարելու համար</p>	<p>Եթե որոշեք դառնալ մեր հարթակի գրանցված օգտատեր, ITX MERKEN- ը պետք է մշակի ձեր տվյալները՝ ձեզ՝ որպես Հարթակի օգտատիրոջ նույնականացնելու համար և Ձեզ՝ որպես գրանցված օգտատիրոջ մի շարք գործառույթների, ապրանքների և ծառայությունների հասանելիություն տրամադրելու համար: Դուք կարող եք փակել ձեր գրանցված օգտատիրոջ անձնական հաշիվը՝ կապ հաստատելով մեզ հետ Հաճախորդների աջակցության ծառայության միջոցով:</p>

<p>2. Մեզ հետ Հարթակի միջոցով կնքվող գնումների կամ ծառայությունների վերաբերյալ պայմանագրի մշակման, կատարման և կնքման համար</p>	<p>Մույն նպատակի կատարման շրջանակներում մենք մշակելու ենք ձեր տվյալները հիմնականում՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ Պայմանագրային գործառույթների, ապրանքների կամ ծառայությունների, այդ թվում՝ որակի հարցումների հետ կապված թարմացումների կամ տեղեկատվական ծանուցումների ստացման համար, ինչպես նաև մատուցվող ծառայությունների նկատմամբ հաճախորդների բավարարվածության աստիճանը չափելու համար, ▪ Ձեր կողմից ձեռք բերված ապրանքների վճարման կառավարման համար՝ անկախ վճարման ընտրված ընթացակարգից: Օրինակ՝ ▪ Եթե մեր Վեբ-կայքի կամ հավելվածի միջոցով որևէ ապրանք գնելիս Դուք որոշեք ակտիվացնել Ձեր քարտի տվյալների պահպանման հնարավորությունը ապագա գնումների համար, ապա հնարավորության հասանելիության դեպքում, մեզ հարկավոր կլինի մշակել Ձեր կողմից նշված տվյալները՝ նշված գործառույթի ակտիվացման և զարգացման նպատակով: Նված գործառույթն ակտիվացնելու համաձայնությունը թույլ է տալիս ձեր վճարման տվյալներն ավտոմատ կերպով օգտագործել հետագա գնումների համար, ինչի շնորհիվ դուք ստիպված չեք լինի դրանք մուտքագրել յուրաքանչյուր նոր գործընթացի շրջանակներում, և այդ տվյալները կհամարվեն վավեր հետագա բոլոր գնումների համար: Դուք կարող եք ցանկացած պահի փոփոխել կամ ջնջել ձեր քարտային տվյալները՝ վճարային տեղեկություն բաժնում, կամ մեր Վեբ-կայքում Ձեր անձնական հաշվի միջոցով կամ ՋԱՌԱ հավելվածի դրամապանակի բաժնի միջոցով: ▪ Եթե դուք օգտագործում եք հավելվածի դրամապանակի ֆունկցիոնալությունը անձնական գնումների վճարման համար, ակտիվացման համար մենք պետք է մշակենք Ձեր տվյալները, որպեսզի դուք կարողանաք սկսել ձեր գնումները Հայաստանի ՋԱՌԱ խանութ-սրահներում("այսուհետ՝ "խանութ-սրահներ"), որոնք ներառված են նշված նպատակի համար: ▪ Ակտիվացրեք հարթակի չարտոնված օգտագործման կանխման և հայտնաբերման համար անհրաժեշտ մեխանիզմները (օրինակ՝ գնման և վերադարձի գործընթացի ժամանակ, ինչպես նաև գնման գործընթացի ժամանակ ձեր և/կամ մեր դեմ կատարված հնարավոր խարդախության դեպքում): Եթե մենք համարեն, որ գործարքը կարող է կեղծ լինել, կամ հայտնաբերենք ոչ նորմալ վարքագիծ, որը կփաստի մեր գործառույթների, ապրանքների կամ ծառայությունների ապօրինի օգտագործման փորձի մասին, այս մշակումը կարող է հանգեցնել այնպիսի հետևանքների, ինչպիսիք են գործարքի արգելափակումը կամ ձեր անձնական հաշվի հեռացումը: ▪ Գնում կատարելուց հետո պոտենցիալ փոխանակումների, վերադարձի կառավարման, ինչպես նաև ապրանքների
---	--

	<p>հասանելիության մասին տեղեկության կառավարման, հարթակի միջոցով ապրանքների ամրագրման համար կախված նման հնարավորությունների հասանելիությունից:</p> <ul style="list-style-type: none"> ▪ Հարթակի միջոցով Ձեր կողմից կատարված գնումների համար հաշիվների դուրսգրման և գնումների դիմաց Ձեզ հաշիվ-ապրանքագրեր ներկայացնելու համար: ▪ Այլ հասանելի գործառույթներից ու ծառայություններից՝ գնման, ստացման հնարավորությունից, նվեր քարտի կամ վաուչերի ստացման և օգտագործման հնարավորությունից օգտվելու հնարավորությունն ապահովելու համար, ինչպես նաև մեր գնորդների համար մեր խանութ-սրահներում հասանելի Wi-Fi ցանցից օգտվելու հնարավորությունն ապահովելու համար:
<p>3. Հաճախորդների սպասարկման ակիբների միջոցով կատարված հարցումները կամ դիմումները բավարարելու համար</p>	<p>Մենք մշակում ենք միայն այն անձնական տվյալները, որոնք խիստ անհրաժեշտ են ձեր հարցումը կամ դիմումը կառավարելու կամ լուծելու համար:</p> <p>Եթե մեզ հետ կապվեք հեռախոսի միջոցով, զանգը կարող է ձայնագրվել՝ սպասարկման որակը վերահսկելու նպատակով, որպեսզի մենք կարողանանք պատասխանել ձեր հարցմանը:</p>
<p>4. Մարքեթինգային նպատակներով:</p>	<p>ITX MERKEN-ը մշակելու է Ձեր տվյալները հիմնականում հետևյալ նպատակներով՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ ITX MERKEN-ի կողմից Ձեզ առաջարկվող ծառայություններն անհատականացնելու համար և ZARA-ի հետ ձեր փոխգործակցման հիման վրա նշված ծառայություններին Ձեզ համապատասխան առաջարկներ տրամադրելու հնարավորության ապահովման, ինչպես նաև Ձեր անձնական հաշիվը վերլուծելու համար (օրինակ՝ ձեր կատարված գնումների և դիտումների պատմության հիման վրա): ▪ Եթե և երբ դուք բաժանորդագրվեք մեր նորություններին, ITX MERKEN-ը Ձեր անձնական տվյալները մշակելու է Ձեր բաժանորդագրությունը կառավարելու համար, այդ թվում՝ տարբեր միջոցներով (ինչպես, օրինակ, էլեկտրոնային փոստով կամ SMS-ով) մեր ապրանքների կամ ծառայությունների մասին համապատասխանեցված տեղեկատվություն ուղարկելու համար: ITX MERKEN-ը կարող է նաև Ձեզ տրամադրել այս տեղեկատվությունը push ծանուցումների միջոցով, եթե դուք ակտիվացնեք դրանք Ձեր բջջային սարքավորման վրա: ▪ Ըստ այդմ, խնդրում ենք նկատի ունենալ, որ տվյալների այս մշակումը ներառում է ձեր օգտագործողի կամ հաճախորդի էջի վերլուծություն՝ ձեր նախասիրությունները պարզելու համար, և հետևաբար, պարզելու այն ապրանքներն ու ծառայություններն, որոնք առավելագույնս համապատասխանում ձեր ոճին՝ ձեզ առավել ճշգրիտ տեղեկատվություն ուղարկելու համար: Օրինակ, հիմնվելով ձեր գնումների եւ դիտումների պատմության վրա (այսինքն՝ կախված այն ապրանքներից, որոնց վրա դուք սեղմել եք), ITX MERKEN-ը

	<p>Ձեզ կներկայացնի առաջարկներ այն ապրանքների վերաբերյալ, որոնք, ըստ ITX MERKEN-ի, կարող են հետաքրքրել ձեզ, իսկ եթե դուք գրանցված օգտատեր եք, մենք ձեզ կտրամադրենք “վերականգնել զամբյուղը” հնարավորությունը:</p> <ul style="list-style-type: none"> ▪ Հիշեք, որ դուք կարող եք ցանկացած պահի հրաժարվել նորությունների բաժանորդագրությունից, առանց որևէ վճարումների՝ հարթակի “նորություններ” բաժնի միջոցով: Եթե դուք չեք ցանկանում ստանալ push ծանուցումներ, կարող եք անջատել այս տարբերակը Ձեր բջջային սարքավորման միջոցով: ▪ Ցուցադրել գովազդ համացանցում, որը դուք կարող եք տեսնել կայքեր և հավելվածներ մուտք գործելիս, օրինակ՝ սոցիալական ցանցերում: Գովազդը, որը դուք տեսնում եք, կարող են ցուցադրվել պատահականության սկզբունքով, սակայն որոշ դեպքերում այն կարող է լինել ձեր նախասիրությունների կամ գնումների և դիտումների պատմության հետ կապված գովազդ: ▪ Եթե Դուք օգտվում եք սոցիալական ցանցերից, ITX MERKEN-ը կարող է որոշակի տեղեկատվություն տրամադրել այն ընկերություններին, որոնց հետ համագործակցում է, որպեսզի վերջիններս կարողանան ձեզ ցույց տալ ZARA-ի գովազդը և, որպես կանոն, առաջարկել ձեզ և ձեզ նման այլ օգտատերերին այնպիսի գովազդ, որը հաշվի է առնում Ձեր անձնական հաշիվը նշված սոցիալական կայքերում: Եթե Ձեզ անհրաժեշտ է տեղեկատվություն ձեր տվյալների օգտագործման մասին, ինչպես նաև նրա մասին, թե ինչպես է աշխատում սոցիալական լրատվամիջոցների գովազդը, խնդրում ենք վերանայել սոցիալական լրատվամիջոցների կայքերի գաղտնիության քաղաքականությունը, որտեղ դուք ունեք անձնական հաշիվներ: ▪ Բացի այդ, ITX MERKEN-ը օգտագործում է ձեր տվյալները գովազդի հայտարարությունների սեզմանտի չափման և վերլուծության համար, որոնք ZARA - ն ցույց է տալիս օգտատերերին մեր գործընկերների հարթակներում: Դրա համար ITX MERKEN-ը համագործակցում է նշված երրորդ անձանց հետ, որոնք առաջարկում են նշված ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ տեխնոլոգիաներ (օրինակ՝ cookie-ներ, փիքսելներ և այլն): Խնդրում ենք հաշվի առնել, որ չնայած ITX MERKEN-ը նշված համահեղինակներին (գործընկերներին) չի տրամադրում նույնականացնող անձնական տվյալներ, այն յուրաքանչյուր անգամ տրամադրում է նրանց նույնականացման որոշակի ձև (օրինակ, cookie-ների հետ կապված նույնականացնող տվյալներ և այլն): Եթե ցանկանում եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ այս մասին, ծանոթացեք մեր cookie-ների քաղաքականությանը: Նույն կերպ դուք կարող եք վերականգնել ձեր գովազդային ID-ն կամ անջատել անհատականացված գովազդը ձեր սարքավորման վրա (եթե մեր ծրագիրը տեղադրված է iOS սարքավորման վրա, կարող եք փոփոխել Ձեր նախասիրությունները Կարգավորումներ/
--	---

	<p>Գաղտնիություն/ Գովազդ բաժնում: Եթե Android-ի օգտատեր եք, ապա՝ Կարգավորումներ / Գուգլ/ Գովազդ):</p> <ul style="list-style-type: none"> ▪ Տվյալների ընդլայնում: երբ ITX MERKEN-ը հավաքում է ձեր անձնական տվյալները տարբեր աղբյուրներից, այն կարող է համախմբել դրանք որոշակի հանգամանքներում՝ ապրանքների և ծառայությունների նկատմամբ ձեր ունեցած նախասիրությունների մասին մեր պատկերացումը բարելավելու համար (այդ թվում՝ վերլուծության, օգտատերերի անձնական հաշիվների գնեռացման, մարքեթինգային հետազոտությունների, որակական հարցումների և մեր հաճախորդների հետ մեր փոխգործակցության բարելավման համար): Սա վերաբերում է, օրինակ, նրան, թե ինչպես ITX MERKEN-ը կարող է համադրել ձեր տեղեկությունները, եթե դուք ունեք գրանցված անձնական հաշիվ և օգտագործում եք միևնույն էլիքստի հասցեն, որը կապված է ձեր անձնական հաշվի հետ, դուք գնում եք կատարում որպես հյուր, կամ այն տեղեկությանը, որը հավաքվում է ավտոմատ կերպով (օրինակ՝ IP և MAC հասցեներ կամ մետատվյալներ), որը այն կարող է կապել այն այն տեղեկատվության հետ, որը դուք տրամադրել եք անմիջապես մեզ հարթակում կամ մեր խանութներից որևէ մեկում գործունեության շրջանակներում (օրինակ՝ ձեր գնումների մասին տեղեկություն՝ ինչպես խանութ-սրահներում, այնպես էլ մեր օնլայն խանութում, տեղեկություն Ձեր նախասիրությունների մասին և այլն): Գովազդային ակցիաների անցկացման համար (օրինակ՝ մրցույթների կազմակերպման կամ Ձեր նշած էլեկտրոնային փոստին ի պահ առանձնացված ապրանքների ցանկը ուղարկելու համար): ▪ ITX MERKEN- ին ձեր անմիջական համաձայնության տրամադրման դեպքում հարթակում կամ մեր ալիքների միջոցով սոցիալական ցանցերում Ձեր կողմից հրապարակայնորեն վերբեռնած լուսանկարները կամ նկարները Հարթակում կամ մեր ալիքների միջոցով տարածելու համար:
<p>5. Մեր ծառայությունների բարելավման նպատակով օգտագործման հարմարավետության և որակի վերլուծություն</p>	<p>Եթե Դուք ստանում եք մուտք դեպի մեր հարթակ, ITX MERKEN-ը տեղեկացնում է ձեզ, որ այն օգտագործելու է Ձեր բրաուզերի տեղեկությունը վերլուծական և վիճակագրական նպատակներով, այսինքն՝ հասկանալով համար, թե ինչպես են մեր օգտատերերը փոխգործակցում հարթակի հետ՝ մեր ծառայությունները բարելավելու նպատակով:</p> <p>Բացի այդ, ITX MERKEN - ը պարբերաբար իրականացնում է որակի վերաբերյալ հարցումներ և այլ գործողություններ՝ պարզելու մեր հաճախորդների և օգտատերերի բավարարվածության աստիճանը և որոշելու այն ոլորտները, որտեղ մենք կարող ենք բարելավել մեր աշխատանքը:</p>

3. ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ ՄՇԱԿԵԼ ՁԵՐ ՏՎՅԱԼՆԵՐԸ:

Իրավական պայմանները, որոնց հիման վրա մեզ թույլատրվում է մշակել ձեր անձնական տվյալները, նույնպես կախված են այն նպատակից, որի համար մենք մշակում ենք դրանք, ինչպես ներկայացված է ստորև

Նպատակ	Իրավական կարգավիճակ
<p>1. Հարթակում Ձեր անձնական հաշվի գրանցման կառավարելու համար</p>	<p>ITX MERKEN- ը մշակում է ձեր տվյալները, քանի որ դրանք անհրաժեշտ են Հարթակի օգտագործումը կարգավորող պայմանների հիման վրա: Այլ կերպ ասած, որպեսզի դուք հնարավորություն ունենաք որպես օգտատեր գրանցվել Հարթակում, ITX MERKEN- ը պետք է մշակի ձեր անձնական տվյալները: Հակառակ դեպքում այն չի կարողանա կառավարել ձեր գրանցումը:</p>
<p>2. Գնման կամ ծառայությունների մատուցման պայմանագրի մշակում, կատարում</p>	<p>Մենք մշակում ենք ձեր տվյալները, քանի որ դրանց մշակումն անհրաժեշտ է, որպեսզի մենք կարողանանք Ձեզ հետ կնքել գնումների կամ ծառայությունների մատուցման պայմանագիր:</p> <p>Գնման գործընթացի հետ կապված տվյալների որոշակի մշակումը ակտիվացվում է միայն այն պատճառով, որ դուք հարցում կամ թույլ եք տալիս դա, ինչպես, օրինակ, ապագա գնումների կամ տվյալների մշակման համար վճարային տվյալների (քարտի) պահպանման դեպքում, որն անհրաժեշտ է հավելվածի դրամապանակի բաժնի միջոցով ՀԴՄ կտրոնների սքանավորման համար կամ Coming Soon / Back Soon հնարավորությունը Ձեզ տրամադրելու համար, եթե նման գործառույթները հասանելի են: Նշված դեպքերում Ձեր տվյալների մշակումը կատարվում է ձեր համաձայնությամբ:</p> <p>Մենք համարում ենք, որ մենք ունենք պոտենցիալ խարդախության կամ հարթակի կիրառմամբ խարդախության բացահայտման և կանխման համար անհրաժեշտ ստուգումներ անցկացնելու օրինական շահ, օրինական շահ, օրինակ՝ երբ դուք կատարել եք գնում կամ վերադարձ: Մենք հասկանում ենք, որ նշված տվյալների մշակումը դրական է ներգրավված բոլոր կողմերի համար՝ ձեզ համար, քանի որ այն թույլ է տալիս մեզ միջոցներ ձեռնարկել՝ պաշտպանելու ձեզ երրորդ անձանց կողմից իրականացված խարդախության փորձից, մեզ համար, քանի որ այն թույլ է տալիս խուսափել հարթակի չթույլատրված օգտագործումներից, մեր բոլոր հաճախորդների և հասարակության համար, քանի որ այն նաև պաշտպանում է նրանց շահերը՝ կանխելով և հայտնաբերելով խարդախ գործողություններն առկայության դեպքում:</p>
<p>3. Հաճախորդների սպասարկում</p>	<p>Մենք գտնում ենք, որ մենք օրինական շահագրգռվածություն ունենք՝ պատասխանելու ձեր կողմից ներկայացված հարցումներին կամ խորհրդատվություններին՝ գործող տարբեր կապի ուղիներով: Մենք հասկանում ենք, որ նշված տվյալների մշակումը ձեզ համար օգտակար է նաև այնքանով, որքանով դա մեզ հնարավորություն է տրամադրում համարժեք կերպով աջակցել ձեզ և պատասխանել ներկայացված հարցումներին:</p> <p>Երբ դուք կապվում եք մեզ հետ, մասնավորապես, ձեր պատվերի կամ հարթակի միջոցով ձեռք բերված ապրանքի / ծառայության հետ կապված</p>

	<p>միջադեպերի կառավարման համար, գնման պայմանագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է ձեր տվյալների մշակումը:</p> <p>Երբ ձեր հայցը կապված է ձեր իրավունքների կատարման հետ, որոնց մասին մենք ձեզ տեղեկացնում ենք ստորև, կամ մեր ապրանքների կամ ծառայությունների վերաբերյալ պահանջների հետ, մենք ունենք ձեր տվյալները մշակելու իրավունք՝ մեր իրավական պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:</p>
<p>4. Մարքեթինգ</p>	<p>ITX MERKEN-ն օրինական իրավունք ունի մշակելու ձեր տվյալները մարքեթինգային նպատակներով՝ Ձեր համաձայնության առկայության դեպքում, օրինակ՝ երբ համաձայնվում էք ստանալ անհատականացված տեղեկատվություն մի քանի ալիքների միջոցով, ձեր բջջային սարքավորման վրա միացնում էք push ծանուցումները կամ ձեր նկարները հրապարակում հարթակում կամ սոցիալական ցանցերի ալիքներում:</p> <p>ITX MERKEN-ը կարծում է, որ ունի օրինական հետաքրքրություն՝ Ձեզ առաջարկելու անհատականացված ծառայություններ կամ ցուցադրել անհատականացված տեղեկություն՝ ինչպես մեր, այնպես էլ երրորդ անձանց հարփոխակներում, ինչպես նաև ներգրավել Ձեզ տվյալների ընդլայնման մեջ, ITX MERKEN-ը կարծում է, որ ունի օրինական շահ՝ կատարելու պրոֆիլավորում՝ օգտագործելով ձեր մասին ունեցած տեղեկատվությունը (օրինակ՝ ձեր դիտումները, նախապատվությունները կամ գնումների պատմությունը) և ձեր տրամադրած անձնական տվյալները, օրինակ՝ Ձեր տարիքի, լեզվի մասին տեղեկություն, քանի որ ITX MERKEN-ը հասկանում է, որ նշված տվյալների մշակումը նաև օգտակար է ձեզ համար, քանի որ այն թույլ է տալիս բարելավել ձեր օգտատիրական փորձը և դիտել Ձեր նախասիրություններին համապատասխանող տեղեկատվություն:</p>
<p>5. Օգտագործման հարմարության և որակի վերլուծություն</p>	<p>Մենք գտնում ենք, որ ITX MERKEN-ը օրինական շահ ունի՝ վերլուծելու Հարթակի օգտագործման և օգտատիրոջ բավարարվածության աստիճանը, քանի որ մենք հասկանում ենք, որ այդ տվյալների մշակումը օգտակար է նաև ձեզ համար, քանի որ այն ծառայում է օգտատիրական փորձի բարելավման նպատակին և օգնում ապահովել ծառայության ավելի բարձրորակ:</p>

4. ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՊԱՀՊԱՆՈՒՄ ՁԵՐ ՏՎՅԱԼՆԵՐԸ:

Ժամանակը, որի ընթացքում մենք պահպանում ենք ձեր տվյալները, կախված կլինի այն նպատակներից, որոնց համար մենք մշակում ենք դրանք, ինչպես նկարագրված է ստորև՝

Նպատակ	Ժամանակը, որի ընթացքում Տվյալները պահպանվում են
1. Հարթակում Ձեր անձնական հաշվի գրանցման կառավարելու համար	ITX MERKEN- ը կմշակի ձեր տվյալները այնքան ժամանակ, քանի դեռ դուք գրանցված օգտվող եք (այսինքն՝ մինչև այն պահը, երբ Դուք որոշեք ապաքաժանորդագրվել):
2. Գնման կամ ծառայությունների մատուցման պայմանագրի մշակում, կատարում	<p>Մենք կմշակենք Ձեր տվյալները այն ժամանակի ընթացքում, որը անհրաժեշտ է ապրանքների կամ ծառայությունների գնման գործընթացի կառավարման համար, ներառյալ՝ պոտենցիալ վերադարձի, համապատասխան ապրանքի կամ ծառայության գնման հետ կապված բողոքների կամ պահանջների ներկայացման համար անհրաժեշտ ժամանակը:</p> <p>Երբեմն մենք մշակում ենք տվյալները միայն մինչև այն պահը, երբ Դուք որոշեք, թե ինչպես դա տեղի կունենա վճարային (քարտային) տվյալների դեպքում, որոնք խնդրել եք մեզ պահպանել ապագա գնումների համար (այն դեպքերում, երբ այս գործառույթը հասանելի է):</p>
3. Բաժանորդների աջակցում	Մենք մշակելու ենք ձեր տվյալները այն ժամանակահատվածի ընթացքում, որն անհրաժեշտ է ձեր հարցումը կամ դիմումը բավարարելու համար:
4. Մարքեթինգ	<p>ITX MERKEN- ը կշարունակի մշակել ձեր տվյալները այնքան ժամանակ, քանի դեռ դուք բաժանորդագրված եք նորություններին:</p> <p>Բացի այդ, մենք ձեզ տրամադրելու ենք անհատականացված գովազդային հայտարարություններ այնքան ժամանակ, քանի դեռ Դուք չեք փոխել ձեր բջջային հեռախոսի կամ բրաուզերի կարգավորումները և դրանով չեղարկել Ձեր կողմից տրամադրված թույլտվությունը:</p> <p>Եթե դուք մասնակցում եք գովազդային ակցիաների, մենք այս տվյալները կպահենք ակցիայի ավարտից հետո վեց (6) ամսվա ընթացքում:</p>
5. Օգտագործման հարմարության և որակի վերլուծություն	ITX MERKEN-ը պարբերաբար մշակելու է ձեր տվյալները այն ժամանակի համար, որի ընթացքում մենք սկսում ենք կատարել որոշակի որակական գործողություն կամ հետազոտություն, կամ այնքան ժամանակ, քանի դեռ ձեր բրաուզերի տվյալները չեն անանունացվել:

Չնայած այն հանգամանքին, որ մենք կմշակենք ձեր տվյալները սահմանված նպատակին հասնելու համար բացառապես խիստ անհրաժեշտ դեպքում, մենք հետագայում պատշաճ կերպով պահելու և պաշտպանելու դրանք այն ժամանակահատվածի ընթացքում, որի ընթացքում կարող է առաջանալ դրանց մշակման համար համապատասխան պատասխանատվություն՝ համաձայն գործող օրենսդրության: Հնարավոր

գործողություններից յուրաքանչյուրի ժամկետը լրանալուն պես մենք վերացնելու ենք նշված անձնական տվյալները:

5. Արդյո՞ք մենք կիսում ենք ձեր տվյալները երրորդ անձանց հետ:

Սույն Գաղտնիության և Cookies ֆայլերի քաղաքականության մեջ նշված նպատակներին հասնելու համար ITX MERKEN-ը ձեր անձնական տվյալների հասանելիություն պետք է տրամադրի Inditex խմբի սուբյեկտներին և երրորդ կողմերին, որոնք մեզ աջակցում են մեր կողմից առաջարկվող ծառայությունների շրջանակներում, օրինակ՝

- ֆինանսական հաստատություններին,
- կեղծիքների հայտնաբերման և կանխարգելման մարմիններին,
- տեխնոլոգիական և վերլուծական ծառայություններ մատուցող ընկերություններին,
- լոգիստիկայի, տրանսպորտի և առաքման հետ կապված ծառայությունների մատակարարներին և գործընկերներին, և (կամ) նրանց գործընկերներին,
- **հաճախորդների սպասարկման** հետ կապված ծառայություններ մատուցողներին,
- մարքեթինգի և գովազդի հետ կապված ծառայություններ մատուցողներին և անձնակազմին, օրինակ՝ սոցիալական կայքերին, գովազդային գործակալություններին կամ մեր գովազդային գործընկերներին:

Բացի այդ, ITX MERKEN-ը տեղեկացնում է ձեզ, որ մենք պետք է փոխանցենք Ձեր տվյալները industria de Diseño Textil, S. A. (Inditex, S. A.), Inditex Group հոլդինգային ընկերության հետ, որը գտնվում է Իսպանիայում՝ Գլխավոր Ընկերության պարտավորությունների հետ համապատասխանության համար:

6. ՈՐՈՆՔ ԵՆ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԵՐԲ ՄԵՉ ԵՔ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ՁԵՐ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Մենք պարտավորվում ենք պահել ձեր անձնական տվյալները գաղտնի և երաշխավորում ենք ձեր իրավունքների կատարման հնարավորությունը: Հաշվի առնելով վերոնշյալը, մենք համատեղ վերահսկողներս, համաձայնեցրել ենք, որ դուք կարող եք անվճար օգտվել ձեր իրավունքներից՝ մեզ էլեկտրոնային նամակ գրելով միասնական էլեկտրոնային փոստի հասցեին (dataprotection@zara.com) պարզապես մեզ տեղեկացնելով այն իրավունքի մասին, որից կցանկանայիք օգտվել: Եթե մենք դա անհրաժեշտ համարենք ձեր ինքնությունը հաստատելու համար, մենք կարող ենք խնդրել Ձեզ տրամադրել Ձեր ինքնությունը հաստատող փաստաթղթի պատճենը:

Մասնավորապես, անկախ ձեր տվյալների մշակման համար օգտագործվող նպատակից կամ իրավական հիմքից, դուք ունեք հետևյալ իրավունքները՝

- Պահանջել մեր կողմից պահպանվող Ձեր անձնական տվյալների հասանելիությունը: Մենք հիշեցնում ենք Ձեզ, որ եթե դուք հարթակի գրանցված օգտատեր եք, դուք կարող եք նաև ծանոթանալ այս տեղեկությանը ձեր առցանց հաշվի համապատասխան բաժնում:

- Մեզ մոտ պահպանված անձնական տվյալների շտկում պահանջելու համար: Խնդրում ենք հաշվի առնել, որ եթե դուք հանդիսանում եք հարթակի գրանցված օգտատեր, դուք կարող եք նաև մուտք գործել Ձեր անձնական հաշվի անձնական տվյալների համապատասխան բաժինը՝ Ձեր անձնական տվյալները փոփոխելու կամ թարմացնելու համար: Ցանկացած դեպքում, խնդրում ենք հաշվի առնել, որ, ցանկացած ընթացակարգով ակտիվորեն տրամադրելով մեզ Ձեր անձնական տվյալները՝ դուք երաշխավորում եք, որ դրանք ճշգրիտ են և հավաստի, և պարտավորվում եք տեղեկացնել մեզ ցանկացած ձեր տվյալների ցանկացած փոփոխությունների կամ լրացումների մասին: Դուք պատասխանատվություն եք կրում սխալ, կեղծ կամ թերի տեղեկատվություն տրամադրման հետևանքով հարթակին կամ հարթակի համար պատասխանատու անձին կամ ցանկացած երրորդ անձին պատճառած վնասների կամ կորուստների համար: Խնդրում ենք հիշել, որ ընդհանուր առմամբ, դուք պետք է մեզ տրամադրեք միայն ձեր անձնական տեղեկատվությունը և ոչ որևէ երրորդ կողմի տվյալներ՝ բացառությամբ սույն Գաղտնիության և cookies ֆայլերի քաղաքականությամբ նախատեսված դեպքերի:
- Պահանջել, որ մենք ջնջենք Ձեր անձնական տվյալները այն ծավալով, որքանով դրանք այլևս անհրաժեշտ չեն այն նպատակների համար, որոնց համար մենք պետք է շարունակենք դրանք մշակել, կամ երբ մենք այլևս չունենք դրանց մշակման համար օրինական թույլտվություն:
- Պահանջել, որ մենք դադարեցնենք կամ սահմանափակենք Ձեր անձնական տվյալների մշակումը, որը հանգեցնում է այն բանին, որ որոշ դեպքերում դուք կարող եք խնդրել մեզ ժամանակավորապես կասեցնել նշված տվյալների մշակումը, կամ եթե մենք պահենք Ձեր տվյալները ավելի երկար, քան դա անհրաժեշտ է:

Եթե դուք մեզ տվել եք ձեր համաձայնությունը ցանկացած նպատակով ձեր տվյալները մշակելու համար, դուք նաև իրավասու եք ցանկացած պահի չեղարկել Ձեր կողմից վերապահված իրավունքները: Որոշ հանգամանքներ, որոնց դեպքում դուք կարող եք հետ կանչել ձեր համաձայնությունը, մանրամասն նկարագրված են Բաժին 2-ում, որտեղ մենք բացատրում ենք, թե ինչ նպատակներով ենք մշակում Ձեր տվյալները: Օրինակ, եթե դուք չեք ցանկանում, որ մենք Ձեր տվյալներն ուղարկենք երրորդ անձանց՝ ձեզ համապատասխան գովազդ ցուցադրելու համար, կարող եք փոխել ձեր նախապատվությունները Ձեր բջջային սարքավորման վրա՝ վերակարգավորելով ձեր գովազդային ID-ին կամ անջատելով ձեր սարքավորման համար անհատականացված գովազդը: Եթե դուք օգտագործում եք մեր հավելվածը iOS սարքավորման վրա, կարող եք փոփոխել Ձեր նախապատվությունները Կարգավորումներ/Գաղտնիություն/Գովազդ բաժնում: Եթե Android-ի օգտատեր եք, ապա՝ Կարգավորումներ / Գույլ/ Գովազդ: Եթե դուք այցելում եք մեր վեբ-կայքը, ապա կարող եք փոխել cookie-ների կարգավորումները Ձեր բրաուզերում:

Եթե մեզ օրինական կերպով թույլատրվում է ձեր համաձայնությամբ կամ պայմանագրի շրջանակներում մշակել Ձեր տվյալները, ինչպես նկարագրված է բաժին 3-ում, ապա դուք նաև իրավունք ունեք պահանջել ձեր անձնական տվյալների տեղափոխելիությունը: Սա նշանակում է, որ դուք իրավունք կունենաք ստանալու անձնական տվյալներ, որոնք դուք տրամադրել եք մեզ կառուցվածքային, լայնորեն օգտագործվող և մեքենայաընթացի ձևաչափով՝ դրանք առանց մեր կողմից որևէ խոչընդոտների ուղղակիորեն երրորդ անձանց փոխանցելու հնարավորությունն ապահովելու համար:

Բացի այդ, եթե ձեր տվյալների մշակումը հիմնված է մեր օրինական շահերի վրա, դուք նույնպես իրավասու եք առարկելու ձեր տվյալների մշակման դեմ:

Վերջապես, մենք ձեզ տեղեկացնում ենք, որ դուք իրավունք ունեք հայց ներկայացնել տվյալների պաշտպանության պատասխանատու կարգավորող մարմնին, մասնավորապես՝

- տվյալների պաշտպանության հոլանդական մարմին (Authority (Autoriteit Persoonsgegevens) <https://autoriteitpersoonsgegevens.nl/nl>)
- տվյալների պաշտպանության Հայկական մարմին (<http://www.justice.am/structures/view/structure/32>)

7. ԻՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ, ԵՐԲ ԴՈՒՔ ՄԵՋ ԵՔ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՏՎՅԱԼՆԵՐ ԿԱՍ ԵՐԲ ՈՐԵՎԵ ԵՐՐՈՐԴ ԱՆՁ ՄԵՋ Է ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ՁԵՐ ՏՎՅԱԼՆԵՐԸ:

Մենք առաջարկում ենք ֆունկցիոնալ հնարավորություններ կամ ծառայություններ, որոնք պահանջում են մեզանից երրորդ անձի անձնական տվյալների մշակում, որոնք դուք պետք է տրամադրեք, օրինակ, նվեր քարտի կամ նվեր վաուչերի ակտիվացման և ուղարկման դեպքում (եթե նման հնարավորությունները հասանելի են), կամ երբ դուք թույլ եք տալիս երրորդ անձի պատվեր կատարել մեր խանութում կամ գործընկեր հաստատություններում: Այն դեպքում, երբ Դուք մեզ եք տրամադրում երրորդ անձանց անձնական տվյալներ, կամ եթե մենք պահանջում ենք դրանք, որպեսզի երրորդ անձը կարողանա Ձեր անունից ստանալ պատվեր, Դուք հաստատում եք, որ Դուք տեղեկացրել եք իրենց անձնական տվյալների մշակման նպատակների և եղանակի մասին:

Եթե որևէ երրորդ անձ մեզ է տրամադրել ձեր տվյալները, կամ դուք ինքներդ եք տրամադրել դրանք մեր օգտատերերից մեկի կողմից պահանջված գործառույթի կամ ծառայության օգտագործման արդյունքում, մենք դրանք կօգտագործենք նշված գործառույթը կամ ծառայությունը գործածելու համար: Յուրաքանչյուր դեպքում, սույն Գաղտնիության քաղաքականության մեջ նշված նպատակների շրջանակներում, որի հղումը միշտ ներառված է մեր հաղորդագրությունների մեջ:

8. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԱՂՏԻՈՒԹՅԱՆ և COOKIE ՖԱՅԼԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մենք կարող ենք փոփոխություններ կատարել սույն Գաղտնիության և cookie ֆայլերի քաղաքականության մեջ, երբ մենք դա նպատակահարմար համարենք: Եթե մենք դա անենք, մենք Ձեզ տարբեր ընթացակարգերի միջոցով հարթակի միջոցով կձանուցենք (օրինակ, բանների միջոցով, դուրս եկող պատուհանների կամ push ծանուցումների միջոցով), կամ մենք կարող ենք անգամ ուղարկել ձեզ ծանուցում ձեր էլեկտրոնային փոստի հասցեն, երբ վերանայված փոփոխությունը վերաբերում է ձեր գաղտնիությանը, այնպես, որ դուք կարող եք դիտել փոփոխությունները, գնահատել դրանք և, կախված հանգամանքներից, առարկել կամ հրաժարվել ցանկացած ծառայության կամ գործառույթի համար բաժանորդագրությունից: Ամեն դեպքում, խորհուրդ ենք տալիս պարբերաբար դիտել սույն գաղտնիության և cookie ֆայլերի քաղաքականությունը՝ աննշան փոփոխությունների կամ որևէ ինտերակտիվ բարելավումների դեպքում՝ օգտվելով այն հնարավորությունից, որ դուք միշտ կգտնեք այն որպես տեղեկատվության մշտական աղբյուր մեր կայքում և մեր հավելվածում:

9. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ COOKIES ՖԱՅԼԵՐԻ ՄԱՍԻՆ

Մենք օգտագործում ենք cookie ֆայլեր և նմանատիպ այլ սարքեր՝ հարթակում ձեր գործողությունները հեշտացնելու, մեզ հետ Ձեր փոխազդեցության բնույթը հասկանալու, և, որոշ դեպքերում, Ձեր նախասիրությունների հիման վրա Ձեզ համապատասխան գովազդ ցույց տալու համար: Խնդրում ենք շարունակեք ընթերցել, որպեսզի ավելի մանրամասն հասկանաք cookie ֆայլերի և մեր կողմից օգտագործվող նմանատիպ այլ գործիքների էությունը, դրանց նպատակը, ինչպես նաև ծանոթանալ Ձեզ հետաքրքրող այլ տեղեկատվության:

Թխուկների քաղաքականություն

ՆԱԽՔԱՆ ՄԿՄԵԼԸ...

Թխուկների այս քաղաքականության մեջ դուք կգտնեք տեղեկատվություն այն մասին, թե ինչպես ենք մենք օգտագործում հաճախորդների և օգտվողների սարքերում տեղադրված թխուկները և նմանատիպ ծրագրերը: Թխուկների օգտագործումը երբեմն կարող է կապված լինել անձնական տվյալների մշակման հետ, ուստի խորհուրդ ենք տալիս ծանոթանալ մեր Գաղտնիության քաղաքականությանը, որը հասանելի է մեր Հարթակում: Այստեղ կգտնեք տեղեկատվություն, թե ինչպես ենք օգտագործում մեր հաճախորդների և օգտվողների անձնական տվյալները, ինչպես կարող եք օգտվել ձեր իրավունքներից կամ ինչ տերմիններ են օգտագործվում՝ մեր Հարթակը նշելու համար (վեբկայք, հավելված կամ ֆիզիկական խանութներ):

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԽՈՒԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է թխուկը

Թխուկը փոքր տեքստային ֆայլ է, որը կայքը, հավելվածը կամ այլ հարթակ տեղադրում է ձեր համակարգչում, պլանշետում, սմարթֆոնում կամ ցանկացած այլ նմանատիպ սարքում՝ ձեր գննարկման և օգտագործման վերաբերյալ տեղեկատվությամբ, ինչպես պիտակն է, որը նույնականացնում է ձեր սարքը: Թխուկները անհրաժեշտ են, օրինակ, գննարկումը հեշտացնելու և հասկանալու համար, թե ինչպես են օգտվողները կարողանում օգտվել հարթակներից, որպեսզի հնարավոր լինի դրանք բարելավել: Դրանք օգտակար են նաև գովազդ տրամադրելու համար՝ ըստ օգտվողի նախասիրությունների, ինչպես նաև ստորև մանրամասն ներկայացված այլ նպատակների համար: Թխուկները չեն վնասում ձեր համակարգիչը կամ սարքը:

«Թխուկ» ասելով՝ մենք ենթադրում ենք նաև այլ նմանատիպ տեխնոլոգիաներ, որոնք օգտագործվում են ձեր սարքում կամ այնտեղից ինֆորմացիա բեռնելու և/կամ հավաքելու համար, ինչպիսիք են՝ ֆլեշ թխուկները, վեբ փարոսները կամ հետևող ծրագրերը, պիքսելները, HTML5-ը (լոկալ հիշողություն) և ծրագրերի մշակման գործիքակազմի (SDK) հավելվածների տեխնոլոգիաները: «Թխուկ» տերմինը վերաբերում է նաև մատնահետքերի ճանաչման մեթոդներին, այլ կերպ ասած՝ ինֆորմացիան համադրելու տեխնոլոգիաներին, որոնք օգնում են մեզ ճանաչել ձեր սարքը: Այս տեխնոլոգիաները երբեմն գործածվում են թխուկների հետ միասին՝ ինֆորմացիան հավաքելու և պահելու համար՝ մեր Հարթակում ձեզ որոշակի ֆունկցիաներ կամ ծառայություններ տրամադրելու կամ երրորդ կողմի գովազդ ցուցադրելու նպատակով՝ ձեր գննարկումների հիման վրա:

Այս բացատրությունը «Թխուկի» ընդհանուր նկարագրությունն է և ներկայացված է միայն տեղեկատվական նպատակներով: Մեր կողմից օգտագործվող կոնկրետ Թխուկների մասին մանրամասն ներկայացված է մեր Հարթակի թխուկների կարգավորումների վահանակում:

Թխուկների ի՞նչ տեսակներ կան:

Կարդացեք այս բաժինը, որտեղ ներկայացված են Թխուկների տեսակները, որոնք կարող են օգտագործվել օնլայն միջավայրում:

Թխուկները կարող են դասակարգվել հետևյալ կերպ՝ կախված թե ում են պատկանում.

- c. Առաջին կողմի թխուկներ. Ուղարկվում են օգտվողի համակարգչին կամ սարքին խմբագրիչի կողմից կառավարվող համակարգչից կամ տիրույթից, որն ապահովում է օգտվողի կողմից պահանջվող հարթակը կամ ծառայությունը:
- d. Երրորդ կողմի թխուկներ. Օգտվողի համակարգչին կամ սարքին են ուղարկվում այնպիսի համակարգչից կամ տիրույթից, որոնք չեն կառավարվում խմբագրիչի կողմից, այլ մեկ ուրիշի կողմից, որը մշակում է թխուկներից ստացված տվյալները:

Թխուկները կարող են դասակարգվել հետևյալ կերպ՝ կախված թե ինչ նպատակի համար են ծառայում.

- e. Խիստ անհրաժեշտ թխուկներ (տեխնիկական). Թխուկներ, որոնք թույլ են տալիս օգտվողին կայք, հարթակ կամ հավելված գննարկել և օգտվել այնտեղ առկա տարբեր ընտրանքներից կամ ծառայություններից: Օրինակ վերահսկել թրաֆիկը, որոշել տվյալները կամ աշխատաշրջանը, մուտք գործել սահմանափակ մուտքով բաժիններ կամ բովանդակություն, հիշել պատվերի բաղկացուցիչ մասերը, ավարտել պատվերի գնման գործընթացը, կառավարել վճարումը, վերահսկել ծառայության անվտանգության հետ կապված խարդախությունները, գննարկման ընթացքում օգտագործել անվտանգության միջոցներ, լրացնել դիմումաձև միջոցառմանը գրանցվելու կամ մասնակցելու համար, պահել բովանդակությունը տեսանյութերի և աուդիո նյութերի հրապարակման համար, թույլատրել դինամիկ բովանդակության օգտագործում (օրինակ տեքստի կամ պատկերի անիմացիայի բեռնում) և տարածել բովանդակությունը սոցիալական ցանցերում: Քանի որ տեխնիկական թխուկները խիստ անհրաժեշտ են, դրանք ներբեռնվում են կանխադրված կերպով, երբ անհրաժեշտ են՝ հարթակը ցուցադրելու կամ օգտվողի կողմից հայցվող ծառայությունն ապահովելու համար:
- f. Ֆունկցիոնալ կամ անհատականացման թխուկներ. Այս թխուկները անհրաժեշտ են տեղեկատվությունը հիշելու համար, որպեսզի օգտվողը կարողանա մուտք գործել հատուկ բնութագրերով ծառայություն կամ հարթակ, որտեղ նրա նախասիրությունները կարող են տարբերվել ուրիշներից: Օրինակ՝ ցուցադրվող լեզուն, արդյունքների քանակը, երբ օգտվողը կատարում է որոնում, ծառայության արտաքին տեսքը կամ բովանդակությունը՝ կախված օգտագործված գննարկչի տեսակից, կամ տարածաշրջանը, որտեղից օգտվողը մուտք է գործում ծառայություն և այլն: Թխուկներ չընդունելը կարող է հանգեցնել վեբկայքի դանդաղ աշխատանքին կամ վատ հարմարեցված առաջարկների:
- g. Վերլուծական թխուկներ. Այս թխուկները կարող են պարզել օգտվողների քանակը, հարթակում նրանց այցելած բաժինները և ինչպես են օգտվում դրանցից՝ օգտագործման վերաբերյալ վիճակագրական տվյալներ ստանալու և վերլուծություն իրականացնելու համար: Այս կերպ հնարավոր կլինի հարթակից կամ ծառայությունից օգտվելու տվյալների վերլուծության հիման վրա բարելավումներ կատարել:
- h. Հետաքրքրությունների վրա հիմնված գովազդային թխուկներ. Դրանք այն թխուկներն են, որոնք պահում են օգտվողի հետաքրքրությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որը ստացվել է նրանց գննարկումների անընդհատ դիտարկման արդյունքում, ինչը թույլ է տալիս մեզ ստեղծել հատուկ պրոֆիլ այդ հետաքրքրություններին հարմարեցված գովազդ ցուցադրելու համար: Այս թխուկները հնարավորություն են տալիս հնարավորինս արդյունավետ կառավարել գովազդի համար նախատեսված ցանկացած տարածք, որը խմբագրիչը տեղադրել է անմիջապես իր կողմից կամ համագործակցելով երրորդ կողմերի հետ:

Ինչի՞ համար են օգտագործվում Թխուկները մեր Հարթակում:

Թխուկները մեր Հարթակի աշխատանքի կարևոր մասն են կազմում: Մեր Թխուկների հիմնական նպատակն է ձեր գննարկման գործողությունը հնարավորինս հեշտ և արդյունավետ դարձնել: Օրինակ, դրանք օգտագործվում են ձեր նախասիրությունները (լեզուն, երկիրը և այլն) հիշելու համար՝ գննարկման և հետագա այցելությունների ընթացքում: Մենք նաև օգտագործում ենք Թխուկները՝ մեր ծառայություններն ու Հարթակը շարունակաբար բարելավելու և ձեր գննարկման պատմության հիման վրա ձեզ հարմարեցված գովազդ առաջարկելու համար:

Թխուկների օգնությամբ հավաքված տեղեկատվությունը նաև հնարավորություն է տալիս բարելավել մեր Հարթակը կատարելով վիճակագրական տվյալների և օգտագործման օրինաչափությունների հիման վրա գնահատումներ (այցելությունների քանակը, ամենաշատ այցելվող բաժիններ, այցելության ժամանակը և այլն), ունենալ վիճակագրական պատկերացում այն մասին, թե ինչպես են օգտվում Հարթակից, բարելավել մեր ծառայությունները, Հարթակը հարմարեցնել ձեր անհատական հետաքրքրություններին, արագացնել որոնումները և այլն:

Երբեմն մենք կարող ենք օգտագործել Թխուկները՝ տեղեկատվություն ստանալու համար, որը մեզ հնարավորություն է տալիս գովազդ ցուցադրել մեր Հարթակից, երրորդ կողմի հարթակներից կամ ցանկացած

այլ միջոցներից՝ հիմնվելով ձեր գննարկման պատմության (դիտված ապրանքների, այցելած բաժինների և այլնի) վերլուծության վրա:

Ամեն դեպքում, մեր օգտագործած թխուկները ~~երբեք~~ չեն պահում գաղտնի տվյալներ, օրինակ՝ գաղտնաբառեր, կրեդիտային կամ դեբետային քարտի տվյալները և այլն:

Ինչպե՞ս կարող եմ կառավարել Թխուկների օգտագործումն այս Հարթակում:

Թխուկների կարգավորումների վահանակում, որը միշտ հասանելի է մեր Հարթակում, կարող եք գտնել բոլոր տեղեկությունները այս Հարթակի կողմից օգտագործվող Թխուկների վերաբերյալ, ինչպես նաև յուրաքանչյուր Թխուկի նպատակի, տևողության և կառավարման (առաջին կամ երրորդ կողմի) վերաբերյալ տեղեկատվություն, այնպես որ կարող եք ակտիվացնել կամ ապասկտիվացնել Թխուկների օգտագործումը, որոնք խիստ անհրաժեշտ չեն Հարթակի աշխատանքի համար:

Բացի այդ, եթե դուք գննարկում եք ինտերնետը, կարող եք ձեր գննարկիչում ապասկտիվացնել Թխուկների օգտագործումը: Ահա թե ինչպես դա կարող եք անել ամենահայտնի գննարկիչներում.

- [Google Chrome](#)
- [Internet Explorer](#)
- [Mozilla Firefox](#)
- [Safari](#)

Դուք ցանկացած պահի կարող եք դադարեցնել Թխուկների օգտագործումը:

Հիշեք, որ ինչպես Թխուկների կարգավորումների վահանակը կառավարելը, այնպես էլ Թխուկներից հրաժարվելը կախված են ձեր օգտագործած գննարկիչից: Հետևաբար, եթե թխուկները ինչ-որ եղանակով կարգաբերում եք մի սարքում և ցանկանում եք, որպեսզի նույն կերպ կարգաբերվի մեկ այլ սարքում, ապա նույն տարբերակը պետք է ակտիվացնեք մյուս սարքում:

Բացի այդ, ինչ վերաբերում է ձեր հետաքրքրությունների հիման վրա գովազդ տրամադրելու համար օգտագործվող երրորդ կողմի Թխուկներին, նկատի ունեցեք, որ որոշ երրորդ կողմեր կարող են լինել հետաքրքրությունների վրա հիմնված օնլայն գովազդի ինքնակարգավորվող հետևյալ որոշ ծրագրերի անդամներ՝ կամավոր բացառման համապատասխան ընտրանքներով

- Network Advertising Initiative (NAI) - <http://www.networkadvertising.org/choices/>
- Google Analytics - <https://tools.google.com/dlpage/gaoptout>

Ո՞վ է օգտագործում Թխուկներում պահպանված տեղեկատվությունը:

Մեր Հարթակի Թխուկներում պահվող տեղեկատվությունը օգտագործվում է միայն մեր կողմից, բացառությամբ այն տեղեկատվության, որը 2-րդ բաժնում նշված է որպես «Երրորդ կողմի թխուկներ», որը օգտագործվում և կառավարվում է արտաքին կազմակերպությունների կողմից՝ մեզ ծառայություններ մատուցելու համար, որոնք ուղղված են մեր ծառայությունները և մեր Հարթակում օգտվողի աշխատանքը բարելավելուն: Մեր Հարթակի Թխուկների կարգավորումների վահանակում ցանկացած ժամանակ կարող եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ:

Թե ինչպես ենք մշակում ձեր անձնական տվյալները երրորդ կողմերի հետ համագործակցելիս և միջազգային փոխանցման ենթակա տվյալների հետ կապված ավելի մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք կարդալ մեր Հարթակում հասանելի Գաղտնիության քաղաքականությունը և այդ երրորդ կողմի գործընկերների գաղտնիության քաղաքականությունը/գաղտնիության կարգավորումները իրենց հարթակներում: